Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ Երևանի «Հայրապետ Հայրապետյանի անվան թիվ 78 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Պատմություն» /15 ժամ/ և «Քիմիա» /12 ժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի մրցույթի համար:

Ուսուցչի թափուր տեղի համար մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1) Դիմում /Ձև1/,/, մեկ լուսանկար 3 X 4 չափի
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
3) անձը հաստատող փաստաթուղթ
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում/,
5) ինքնակենսագրություն /Ձև 5/
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8) հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Փաստաթղթերն ընդունվում են.2023թ.սեպտեմբերի 6-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ ամեն օր ժամը 10 00-ից մինչև 15 00 բացի շաբաթ կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթն անցկացվելու է Երևանի Հ. Հայրապետյանի անվան թիվ 78 հիմնական դպրոցում՝ 2023թ. սեպտեմբերի 22 -ին ժամը 13 ^{00} -ին:

Հասցեն՝ Մ. Բաղրամյան պող. 57/2: :

Տեղեկությունների համար զանգահարել (010) 22-58-36:

07,09,2023թ.